

**ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի 2013 թվականի հունվարի 19-ի խորհրդի նիստի**

Օրակարգ`

1. 2012-2013 ուսումնական տարվա II կիսամյակի նախապատրաստման մասին
2. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի չորրորդ կուրսերի արտադրական պրակտիկայի կազմակերպման մասին
3. Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում

Նիստին մասնակցում էին խորհրդի 16 անդամներ:

*1. Լսեցին* 2012-2013 ուսումնական տարվա II կիսամյակի նախապատրաստման մասին հարցը /Ձեկուցող` Մ. Հերզնյան/

Ներկայացվեց 2012-2013 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների կազմակերպման ընթացքը: Նշվեց, որ դասախոսները տեղեկացված են երկրորդ կիսամյակի շաբաթական ծանրաբեռնվածությանը:

*Արտահայտվեցին* Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզնյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Ամիրխանյանը

*Որոշեցին`* ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի դասացուցակները տեղակայել ԳՊՀ համացանցային կայքում:

*2. Լսեցին* Չորրորդ կուրսերի արտադրական պրակտիկայի կազմակերպման մասին հարցը /Ձեկուցող` Ս. Ամիրխանյան/

Երեք մասնագիտությունների գծով ներկայացվեց արտադրական պրակտիկայի կազմակերպման ընթացքը, նշվեց, որ ուսանողների պրակտիկայի ուղեգրերն արդեն ներկայացվել են պրակտիկայի վայրեր:

*Արտահայտվեցին* Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզնյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Ամիրխանյանը

*Որոշեցին*

1. Հետևել չորրորդ կուրսերի ուսանողների պրակտիկայի ընթացքին:
2. Պրակտիկաների աշխատանքները ամփոփել պրակտիկան անցկացնող կազմակերպության և համալսարանի ներկայացուցիչների մասնակցությամբ:
3. *Լսեցին* Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին հարցը /Ձեկուցողներ՝ Ս. Ամիրխանյան, Մ. Հերզնյան/

Ներկայացվեցին 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքը և արդյունքները, քննություններին չմասնակցած, անբավարար ստացած ուսանողների կարգավիճակը:

*Արտահայտվեցին* Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզնյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Ամիրխանյանը

*Որոշեցին*

1. Համաձայն կանոնակարգի՝ մեկ առարկայական պարտք ունեցող ուսանողներին թույլատրել քննությունը հանձնել «Բաց դռների» օրը,
2. երկու և ավել առարկայական պարտքեր ունեցող ուսանողների հետ տանել անհատական աշխատանք,
3. հաստատել լուծարային շրջանի ժամանակացույցը:

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ն. Խանդանյան